ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ
С. ШАУМЯНА

5 դեկտեմբերի 2011թ.
գ.Շահումյան

N 82

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Կից Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 08 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 6 թերթ:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՆԱՀԱՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 11593-11
06 12 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

25 նոյեմբերի 2011 թ. թիվ 01

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. *Հաստատել* Արմավիրի մարզի Շահումյանի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 08 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝	6 կողմ(ստորագ.)	0 դեմ(ստորագ.)	ձեռնպահ (ստորագ.)
1. Ս.Պողոսյան	----------	----------	----------
2.Գ.Սուքիասյան	----------	----------	----------
3.Կ.Եղիազարյան	----------	----------	----------
4.Գ.Գևորգյան	----------	----------	----------
5.Ե.Նավասարդյան	----------	----------	----------
6.Ա.Հակոբյան	----------	----------	----------

Շահումյանի գյուղական համայնքի ղեկավար՝ Հ.Գ. Նավասարդյան

Կ.Տ.

2011 թվականի նոյեմբերի 25
գ. Շահումյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի
ԹԻՎ 08 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԹԻՎ 01
ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:

   Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Հ.Գ.Նավասարդյան

2. Շահումյանի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին:

   Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Հ. Գ. Նավասարդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 25» նոյեմբերի 2011 թ. N 2-Ն

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Ս.Պողոսյան	----------	----------	----------
2.Գ.Սուքիասյան	----------	----------	----------
3.Կ.Եղիազարյան	----------	----------	----------
4.Գ.Գևորգյան	----------	----------	----------
5.Ե.Նավասարդյան	----------	----------	----------
6.Ա.Հակոբյան	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Կ.Տ.

2011 թվականի նոյեմբերի 25

գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի
N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

I. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական, և արտադրական նշանակության օբյեկտների համար 5000 / հինգ հազար / դրամ .

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ .

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ .

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 /երկու հազար/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1000/ մեկ հազար / դրամ

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում է նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 2000/երկու հազար/ դրամ ;
4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝
   1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500/ մեկ հազար հինգ հարյուր/ դրամ .
   2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500/ մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:
5. Համայնքի տարածքում՝
   1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 250 /երկու հարյուր հիսուն/ դրամ :
   2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի, սեղմված գազերի վաճառքի թուլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ :
   3) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000/հիսուն հազար/ դրամ:
6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները/սաունաները/ , խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա սահմանել՝
   1) առևտրի օբյեկտների համար՝ 25000/քսանհինգ հազար/ դրամ.
   2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000/ հիսուն հազար/ դրամ.
   3) բաղնիքների/ սաունաների/ համար՝ 200000 / երկու հարյուր հազար/ դրամ.
   4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ.
   5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.
   6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 / մեկ հարյուր հազար/ դրամ:
7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թուլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
   1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 / երկու հազար/ դրամ.
   2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 / երկու հազար հինգ հարյուր/ դրամ.
   3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000/ մեկ հազար/ դրամ.
   4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700/ յոթ հարյուր/ դրամ .
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:
9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 / հինգ հազար / դրամ :

II. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

10. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000/ մեկ հազար/ դրամ:
11. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար՝ 1000/ մեկ հազար/ դրամ :
12. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 / հինգ հազար/ դրամ: